ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Ֆիլյոր» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-19/ՀԱՊԾ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «26» դեկտեմբերի 2019թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտորի պաշտոնակատար Դ. Գալոյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ֆիլյոր» ՍՊԸ-ն դեմս տնօրեն Պ. Սահակյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Պատվիրատուի և Կատարողի միջև 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-19/ՀԱՊԾ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.8 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրով նախատեսված հանրային անվտանգության պաշտպանության ծառայության մատուցման ժամկետը սահմանել 25.01.2020 թվական:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թվականի թիվ 526-ն որոշման 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի դրույթները, կողմերը համաձայնվում են Պայմանագրի N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

1.3 Պայմանագրի ընդհանուր գինը փոփոխությունից հետո կկազմի 17,500,000 (Տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Ֆիլյոր» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք. Երևան, Ահարոնյան 2/5
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 1660001324710100
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 00106835

Ռեկտորի պաշտոնակատար Դ. Գալոյան
/ստորագրություն/

Տնօրեն Պ. Սահակյան
/ստորագրություն/

Հավելված N 1
***ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-19/ՀԱՊԾ-1** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ, ԳՆՄԱՆ-ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
1) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ում, **ք. Երևան Նալբանդյան 128** հասցեում անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա հանրային անվտանգության պաշտպանության ծառայություններ, առանց հանգստյան և տոնական օրերի. Ա) 4 կետ որից՝ 2 կետը /կենտրոնական մասնաշենք և դարպասներ/ 24 ժամյա ծառայություն 2 կետը /ֆինանսական, մարքենթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետներում/ ծառայություն՝ միայն աշխատանքային օրերին, 8:00-ից մինչև 19:00-ն ժամը. Բ) Մեկ շրջիկ՝ միայն աշխատանքային օրերին, 9:00-ից մինչև 18:00-ն ժամը վերահսկում է պահպանվող տարածքը և նշված 4 կետերը: Գ) Պատասխանատու՝ միայն աշխատանքային օրերին 8:00-ից մինչև 19:00-ն ժամը, պատասխանատու է նշված 4 կետի և ամբողջ տարածքի համար: Դ) Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահոված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով, այդ թվում ունենան նաև կապի միջոցներ և դրանցից օգտվելու թուլտվություն. Ե) իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն. Զ) կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը. Է) արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում /հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն/. Ը) արգելել կողմնակի անձանց մուտքը. Թ) այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ ընդունողի բանավոր թույլատվությամբ. Ժ) իրականացնել պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային գործառույթներ որոնք համապատասխանում են համալսարանի ներքին կանոնակարգին. Ի) ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում աշխատանքի ավարտից հետո. 2) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ում, **ք. Երևան Պ. Սևակ 77** հասցեում անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա հանրային անվտանգության պաշտպանության ծառայություններ, առանց հանգստյան և տոնական օրերի. Ա) 1 կետ 24 ժամյա ծառայություն Դ) Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահոված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով, այդ թվում ունենան նաև կապի միջոցներ և դրանցից օգտվելու թուլտվություն. Ե) իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն. Զ) կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը. Է) արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում /հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն/. Ը) արգելել կողմնակի անձանց մուտքը. Թ) այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ ընդունողի բանավոր թույլատվությամբ. Ժ) իրականացնել պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային գործառույթներ որոնք համապատասխանում են համալսարանի ներքին կանոնակարգին. Ի) իրականացնել վերահսկողություն մասնաշենքի ներսում, դրսում և հարակից բակում.	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	**ավարտը**
01.01.2020թվական	25.01.2020թվական
Ծառայության վճարման ժամանակացույց	
Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ամենամսյա մատուցած ծառայությունը ընդունելու օրվանից հաշված 20 (քսան) բանկային օրվա ընթացքում:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտորի պաշտոնակատար Ռ. Գալոյան
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆիլյոր» ՍՊԸ
ք. Երևան, Ահարոնյան 2/5
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001324710100
ՀՎՀՀ՝ 00106835

Տնօրեն Պ. Սահակյան
/ստորագրություն/Կ.Տ